ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«16» 03 2023թ.
№ ԿԼԱՄ/2-375

« ՄԱՇԽ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 08425696
ՀՀ, ք. Գավառ, Գ. Միքայելյան փ. տուն 69
հեռ. 077455524

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱՇԽ» ՍՊ ընկերության միջև 03.05.2022թ. կնքված ՈԳՀԱՊՁԲ-22-10/6-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՄԱՇԽ» ՍՊ ընկերությունը 2022թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր 1000 հատ աթոռակներ (աթոռակ զինվորական, մետաղական կարկասով), որոնցից 57 հատ չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. մարտի 16-ին** միակողմանի մասնակցի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքի քանակի մասով:

Տեղեկացնում ենք, որ «ՄԱՇԽ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **10 068** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն): Տույժը հաշվարկված է մինչև 31.01.2023թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **543 480** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **46 468** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թ. մարտի 27-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **543 480** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **46 468** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՄԱՇԽ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. մարտի 27-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2076 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ